

1509



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 21 » 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 038 - 25

Նախաձեռնող՝

Քաղաքացի Կարեն Մկրտչյան

Ք. Էջմիածին, Վազգեն ստաջին փ. 40 շ. 43 բն.

Գործունեությունը՝

**Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրում
բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցում**
Արմավիրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 038 - 25

« 21 » փետրվարի 2025թ.

Էջմիածին բնակավայրի Շահումյան փ. 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	քաղաքացի Կարեն Մկրտչյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք

Ներածական մաս. Քաղաքացի Կարեն Մկրտչյանի լիազորված անձ՝ Նազար Նազարյանի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում Շահումյան փ. 75/3 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի /այսուհետ՝ բնակելի շենք/ :

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Վաղարշապատ համայնքի կողմից տրամադրված 2024թ. հոկտեմբերի 6-ի N ՆԹ- 0569-24 նախագծման թույլտվությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 04092024-04-0040 վկայականը (ծածկագիրերը՝ 04-002-0874-0171): Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.3584 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող հողամասը ծանրաբեռնված է քանդման ենթակա 308.7 քմ մակերեսով շինությամբ, բուսականությունից զուրկ տարածք է, ամենամոտ բնակելի շենքը գտնվում է 20 մետր հեռավորության:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է ծովի մակարդակից 867-ից մինչև 868 մետր բարձրությունների վրա:

Բնակելի շենքի տարածքներում առկա չեն Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձաններ: Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը մինչև 20 մետր խորությամբ չեն բացահայտվել:

Բնակելի շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկաերկրաբանական երևույթներ տեղամասում չեն դիտվել:

Համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են



- հողամասի ընդհանուր մակերես՝ 3584.0 մ²,
- վերգետնյա կառուցապատման մակերեսը՝ 944.7 մ²,
- ստորգետնյա կառուցապատման մակերեսը՝ 2.542.8 մ², որից
- ավտոկայանատեղիների մակերես՝ 1088.3 մ²,
- անջրանցիկ մակերես՝ 1203.8մ² /33.6 %/
- կանաչապատման մակերես՝ 1435.5 մ² /40%/:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է 12 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկից բաղկացած բազմաֆունկցիոնալ բնակելի շենք: Առաջին և երկրորդ հարկերում նախատեսվում են որպես հասարակական և գրասենյակային տարածքներ, իսկ 3 – 12 - րդ հարկերը՝ որպես բնակարաններ: Բնակելի հարկերը բաղկացած են 119 բնակարանից: Ստորգետնյա հարկում նախատեսվում է տեխնիկական տարածքներ և կրկնակի նշանակության ավտոկայանատեղի, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց՝ մինչև 500 մարդու համար՝ ապահովված սանհանգույցներով, օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ: Տանիքը հարթ է՝ ներքին ջրահեռացմամբ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ջերմամատակարարման համար նախատեսված են անհատական կաթսաներ, բնակելի շենքն ապահովված է լինելու օդափոխության համակարգերով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար, բնակելի շենքը ապահովված է լինելու թեքահարթակներով, ավտոկայանատեղիում սանհանգույցներով և այլն:

Շահագործման ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միանալու են քաղաքային ցանցին՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի: Կառուցապատողը սահմանված կարգով կդիմի ենթակառուցվածքները տնօրինող կազմակերպություններին համապատասխան տեխնիկական պայմաններ ձեռք բերելու նպատակով:

Գազամատակարարումը կատարվելու է՝ համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների ժամանակահատվածը 36 ամիս է, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոռում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքից հողային ռեսուրսների աղտոտումը կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոնե կարկասներ, բետոնային կառուցվածքներ, ամրան, ավազ, ցեմենտ, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են



մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարության ժամանակահատվածի համար աշխատողների (50 մարդ) կենցաղային և տնտեսական ընդհանուր ջրածախսը կկազմի 1119.45 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 4838.4 մ³/շին.ժամ, անիվների լվացման համար ջրի ծախսը կկազմի 3276 մ³/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9233.85 մ³/շին.ժամ:

Շինարարության ընթացքում խմելու ջրի անհրաժեշտ քանակը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացման, ջրցանի, անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ավտոմատորեն պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և հողայի ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և բետոնաջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Բնակելի շենքի կառուցման աշխատանքների ընթացքում նախատեսվում է մոտ 14580 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 900 մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած 1368 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից տրամադրված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից չտեսակավորված շինադբի (սև մետաղի ջարդոն, էլեկտրոդ, յուղոտ լաթեր, բանվորական ձեռնոցներ և այլն) և կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքներն իրականացվելու են քանդման թույլտվությամբ: Քանդման աշխատանքներից գոյացած շինարարական աղբը կտեղափոխվի Վաղարշապատ համայնքի կողմից տրամադրված վայր:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք կբերվի 1000 մ³ ծավալով բուսահող: Նախատեսվում է տնկել շագանակատերև կաղնի՝ 18 հատ, սրատերև թխկի՝ 12 հատ, սովորական կատալպա՝ 12 հատ, դրախտածառ՝ 7 հատ, արծաթափայլ եղևնի՝ 5 հատ, խենոմելոս՝ 8 հատ, ասպիրակ՝ 12 հատ, սիրիական վարդ՝ 7 հատ, գլխավոր սամշիթ՝ 50



հատ, ծաղկանոց (վարդ)՝ 300 հատ և սիգամարգեր՝ 1435 մ²: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է կաթիլային ոռոգման համակարգով:

Կանաչապատման աշխատանքների նախագծը կներկայացվի Վաղարշապատի համայնքապետարան՝ համաձայնեցման:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- կենսաբազմազանության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Արմավիրի մարզի Էջմիածին բնակավայրում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի հարկայնության բարձրությունը, տեղակայման նախագիծը համաձայնեցվել է քաղաքացիական ավիացիայի կոմիտեի հետ: Համաձայն Կառավարության 2003թ. հունիսի 3-ի թիվ 825-Ն որոշման՝ շինարարական աշխատանքների ընթացքում կապահովվի կառույցի և վերամբարձ կոունկի գիշերային մակնշումները:

Շահագործման ընթացքում շենքի կանաչ տարածքների և ծառերի խնամքը կիրականացվի բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառավարումն իրականացնող համատիրության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, տարբեր գերատեսչություններ, Արմավիրի մարզպետարանը, Վաղարշապատի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքում իրականացվել են հանրային լուսմներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների



կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի պահպանման նպատակով:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Շահումյան փ. 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Շերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան